

ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀՆԱՐԱՎՈՐ ՌԻՍԿԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ

1. Արժեթղթերի շուկայում գործունեություն իրականացնելիս «ռիսկ» կատեգորիայի տակ հասկացվում է որոշակի դեպքերի, իրավիճակների կամ գործընթացների ի հայտ գալու հավանականություն, որը կարող է հանգեցնել արժեթղթերում ներդրումներից ակնկալվող օգուտների չստացմանը, թերստացմանը կամ ներդրումների կորստին:

2. Արժեթղթերում ներդրումները երաշխավորված չեն ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից,

3. Արժեթղթերում ներդրումներ իրականացնելիս, Հաճախորդն առնչվում է ռիսկերի հետևյալ տեսակներին՝

3.1. **Շուկայական ռիսկ:** Ռիսկի այս տեսակը կապված է շուկայական պայմանների փոփոխության հետ, դրանք են՝

3.1.1. *Գնային ռիսկ:* Բաժնետոմսի գնի անբարենպաստ փոփոխությամբ պայմանավորված ֆինանսական կորուստներ կրելու ռիսկ:

3.1.2. *Տոկոսադրույքի ռիսկ:* Շուկայական տոկոսադրույքների ընդհանուր մակարդակի անբարենպաստ փոփոխությամբ պայմանավորված կորուստներ կրելու ռիսկ:

3.1.3. *Վարկային սփրեդի փոփոխության ռիսկ:* Ռիսկային պարտատոմսերում ներդրումներից ֆինանսական կորուստներ կրելու ռիսկ, կապված ռիսկային պարտատոմսի և անռիսկ պարտատոմսի եկամտաբերության տարբերության (վարկային սփրեդ) ավելացմամբ:

3.1.4. *Վարկանիշի փոփոխության ռիսկ:* Պարտատոմսերում ներդրումներից ֆինանսական կորուստներ կրելու ռիսկ, կապված թողարկողի վարկանիշի նվազեցման հետ:

3.1.5. *Իրացվելիության ռիսկ:* Արժեթղթի գնման կամ վաճառքի ժամանակ արժեթղթի շուկայական արժեքից զգալի տարբերությամբ գործարքների իրականացման ռիսկ, որն պայմանավորված է շուկայի անբավարար առաջարկով կամ պահանջարկով:

3.1.6. *Արտարժույթային ռիսկ:* Արտարժույթով իրականացված ներդրումներից ֆինանսական կորուստների առաջացման ռիսկ, պայմանավորված արտարժույթի փոխարժեքների անբարենպաստ փոփոխությամբ (օրինակ ԱՄՆ դոլարով ներդրումների դեպքում, ԱՄՆ դոլարի փոխարժեքի անկումը ՀՀ դրամի նկատմամբ կնշանակի արժեթղթում ներդրման արժեզրկում ՀՀ դրամով արտահայտված):

3.2. **Թողարկողի վարկային ռիսկ:** Թողարկողի կողմից պարտքային արժեթղթով սահմանված պարտավորությունների չկատարման պատճառով ներդրումներից ֆինանսական կորուստներ կրելու ռիսկ:

3.3. **Օրենսդրական փոփոխությունների ռիսկ:** Այս ռիսկը կապված է պետական իշխանությունների և արժեթղթերի շուկաները կարգավորող մարմինների գործողությունների հետ, որի հետևանքով Հաճախորդը կարող է կրել վնասներ:

3.4. **Գործառնական ռիսկ:** Տեղեկատվական, էլեկտրական, այլ համակարգերի անսարքության կամ շուկայի ոչ կատարյալ ենթակառուցվածքներով պայմանավորված՝ սխալների պատճառով առաջացող ուղղակի կամ անուղղակի կորուստների ռիսկ: Առանձնացնում ենք գործառնական ռիսկի հետևյալ տեսակները՝

- տեղեկատվական ռիսկ,
- արժեթղթերի հաշվառման համակարգերի հետ կապված ռիսկ,
- կոմունիկացիոն, էլեկտրական համակարգերի օգտագործման ռիսկ:

3.5. **Տեխնոգեն և բնական աղետների հետ կապված ռիսկ:** Տեխնոգեն ռիսկը մարդու տնտեսական գործունեության հետ կապված ռիսկն է, մասնավորապես հրդեհներ, վթարներ և այլն, իսկ բնական աղետների հետ կապված ռիսկը կապված չէ մարդու տնտեսական գործունեության հետ, դրանց օրինակներ են՝ երկրաշարժերը, ջրհեղեղները և այլ բնական աղետներ:

4. Սույն Հավելվածի 3-րդ կետում ներկայացված ռիսկի տեսակները ամբողջական չեն և չեն բացահայտում ռիսկերի վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը՝ կապված արժեթղթերի շուկայում ներդրումների հետ:

5. Սույն հավելվածի նպատակն է՝ Հաճախորդին ծանոթացնել Արժեթղթերի շուկայում ի հայտ եկող ռիսկերին, ինչպես նաև հորդորել Հաճախորդին ճիշտ գնահատել հավանական ռիսկերը և ձևավորել ներդրումային ռազմավարություն՝ ելնելով իր համար ընդունելի ռիսկից:

6. Բանկը Հաճախորդին չի երաշխավորում եկամտի ստացում նրա կողմից տրված Հանձնարարականների կատարման արդյունքում: Հաճախորդը ինքնուրույն է որոշումներ կայացնում արժեթղթերի շուկայում գործարքներ կնքելու և ներդրումային ռազմավարություն մշակելու հարցում:

7. Հաճախորդը ինքն է կրում ամբողջ պատասխանատվությունը ռիսկերի գնահատման, ներդրումային որոշումների կայացման և ռազմավարության ընտրության հետ կապված:

8. Անցյալում արժեթղթերի շուկայում իրականացրած ներդրումների հաջողությունը, կամ այլ անձանց հաջող իրականացրած ներդրումները չեն կարող նմանատիպ արդյունքի երաշխավոր հանդիսանալ: Հաճախորդը պետք է գիտակցի, որ արժեթղթերի շուկայում իրականացված ներդրումները կարող են բերել ֆինանսական կորուստների:

Հաճախորդ՝

Անուն ազգանուն/անվանում

Սկորագրություն